****

Ջուր կամ գինի պիտէի, որ ի քո սիրտըդ մտնէի,
Ներքեւ լեզուիդ անցնէի ու ամէն տէրտըդ գիտնայի:

****

Եկու որ սիրենք իրար ու դընենք նըշան մատանի.
Ասկից ու հազար տարի, իմ ու քու սէրըն չըհատնի:

****

Բանամ զարծըթէ խաֆէսն, մո՛ւտ ի ներս ու տէվրան արա՛:
Պագիկ տանք ու պագ առնենք, մարդ ըզմեր սէրըն չիմանայ:

****

Ո՛վ իմ աղուոր լուսերես, ո՞ւր երթաս, քու ժամն է հէրամ.
Դարձիր մէկ մի իս նայէ, ահա ժամ ու լութֆի քէրամ.
Ուրտեղ ժամ նը՝ ան տեսնեմ, քեզ համար կոյնիմ ես ի ժամ,
Աղօթք աղաչանք անեմ մինչեւ քո ծոցուդ տիրանամ:

ՍԻՐՈՅ ԱՆՏՈՒՆԻ

****

Գամ կայնիմ ի քո դիմաց, լամ՝ լալով անեմ քեզ իմաց,
Ինծի գէմ սէր չէ պակաս, կամ ի քո սիրուն կարօտած:

****

Քո սէրն իմ սրտիս միջին հէնց մընտեր զէտ ոսկի բեւեռ,
Գնացեր ի սրտիկս ի ներս, լուկ փեռչին եղեր կեռումեռ:

****

Տեսայ իմ հոգուս հոգին որ կ’երթար ի պաղչան ի վար,
Մանըր մանըր կու քալէր, կու քաղէր ծաղիկ նունուֆար:

****

Էպըրշում խալի ձըգեմ, ոսկի թել տօշէկն ի վըրայ,
Բարձիկ մը սուֆրա դընեմ, տապըկած կաքաւ մ’ի վըրայ:
Շուշայ մի գինի բերեմ, ան խըմեմ քու սիրուն վըրայ,
Հագնիմ ի շարէ շապիկս, որ շարէ ծիծերս երըւայ: